

Պ-175<sup>4</sup>-11.12.2012,02.04.2013-ԱԱ-010/3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՕ-474-Ն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Կինն իրավունք ունի տեղեկություն ստանալ կրծքով կերակրման առավելությունների, ինչպես նաև մանուկների և վաղ տարիքի երեխաների առողջ և անվտանգ սնուցման վերաբերյալ:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող իննսուներորդ օրը:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

«Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», ««Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», ««Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և ««Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ

<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ</b>				
<b>ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱՄԻՍՄԱՆ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ</b>				
	<b>Առաջարկության հեղինակ</b>	<b>Նախագծի փոփոխվող մաս</b>	<b>Առարկության, առաջարկության բովանդակություն</b>	<b>Եզրակացություն</b>
1.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան, Մ. Մինասյան	Նախագծի 5-րդ հոդված	5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «կարգի հաստատումը» բառերը փոխարինել «կարգի սահմանումը» բառերով:	Առաջարկն ընդունված է
2.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան, Մ. Մինասյան	Նախագծի 12-րդ հոդված	12-րդ հոդվածում՝  1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների, մինչև 6 ամսական մանուկների համար մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող ցանկացած սննդամթերքի և հարակից ապրանքների գովազդը և (կամ) խրախուսման այլ ձևերն արգելվում են:»:  2. 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. « 2. Խրախուսման արգելված այլ ձևերն ընդգրկում են՝ 1) հատուկ ցուցահանդես-վաճառքները, շնորհանդեսները, շահումները, պարգևների, մրցանակների, նվերների շնորհումը, զեղչի կտրոնների կիրառումը, ինչպես նաև զեղչային կամ որևէ այլ խրախուսական նպատակներ հետապնդող	Առաջարկներն ընդունված են

			<p>գնային քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը, ցուցադրումը, տարածումը կամ այլ ձևով հրապարակայնորեն հասանելի դարձնելը.</p> <p>2) մանկական սննդի և հարակից ապրանքների նմուշների տրամադրումը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:»:</p>	
3.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան, Մ. Մինասյան	Նախագծի 16-րդ հոդված	<p>Հաշվի առնելով, որ օրենքի նախագծի տեքստում կիրառվում է «մանկական կաթնախառնուրդ» հասկացությունը, առաջարկում ենք՝</p> <p>16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում «մանուկների և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների» բառերը փոխարինել «մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների» բառերով:</p>	Առաջարկն ընդունված է
4.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան, Մ. Մինասյան	Նախագծի 17-րդ հոդված	<p>Հաշվի առնելով, որ «պիտակներին» բառը տեքստից բաց է թողվել, առաջարկում ենք՝</p> <p>17-րդ հոդվածի 3-րդ մասում «ապրանքներին» բառը փոխարինել «ապրանքների պիտակներին» բառերով:</p>	Առաջարկն ընդունված է
<p><b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ</b>  <b>ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ</b>  <b>ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ</b></p>				
1.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան, Մ. Մինասյան	Նախագծի 1-ին հոդված	<p>Քանզի «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքի նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասը վերախմբագրվել է, առաջարկում ենք նմանատիպ փոփոխություն կատարել նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում և 1-ին հոդվածով լրացվող 47.8-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«3. Մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների, մինչև 6 ամսական մանուկների համար մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող ցանկացած սննդամթերքի և հարակից ապրանքների գովազդը և (կամ) խրախուսման այլ ձևերը՝</p>	Առաջարկն ընդունված է

			առաջացնում են տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:»:	
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ</b> <b>«ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ</b> <b>ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ</b>				
1.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան, Մ. Մինասյան	Նախագծի 1-ին հոդված	<p>Հաշվի առնելով, որ «Երեխաներին կրճքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքի նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասը վերախմբագրվել է, առջարկում ենք նմանատիպ փոփոխություն կատարել նաև ««Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում և 1-ին հոդվածով առաջարկվող լրացումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«6. Մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների, մինչև 6 ամսական մանուկների համար մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող ցանկացած սննդամթերքի և հարակից ապրանքների գովազդն արգելվում է:»:</p>	Առաջարկն ընդունված է